Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, Գ.Խ. Նախագահ
Ն. Խ. Մարիբեկյան
«28» ________ 2014 թ.

ԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն փաստաթուղթը սահմանում է Ավանդական բժշկության համալսարանում ուսանողների դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկման կարգը:

1.2 Սույն կարգը բխում է ՀՀ օրենսդրությունից, համալսարանի կանոնադրությունից և կանոնակարգող ներքին այլ փաստաթղթերից:

1.3 Սույն կարգում կարող են փոփոխություններ և լրացումներ կատարվել Գիտական խորհրդի կողմից:

II. Նպատակն ու խնդիրները

Նպատակը.

2.1 Կարգի նպատակն է ձևավորել և/կամ ապահովել ուսանողների կարիքների վերհանման և շահերի պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ և ընթացակարգ:

Խնդիրները.

2.2 Ապահովել դիմումների, բողոքների և առաջարկությունների ներկայացման հասանելիություն և մատչելիություն:

2.3 Ապահովել դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկման արդյունավետություն:

III. Դիմումների, բողոքների և առաջարկությունների ներկայացման և քննարկման ընթացակարգ

3.1 Համալսարանում դիմումները, բողոքներն ու առաջարկությունները ուսանողները կարող են ներկայացնել գրավոր:

3.2 Գրավոր ձևով ներկայացվող դիմումները, բողոքներն ու առաջարկությունները պետք է լինեն մտքերի պարզ, հստակ, համառոտ շարադրված՝ սահմանված ձևաթերթին համապատասխան:

3.3 Դիմումները, բողոքներն ու առաջարկությունները կարող են ներկայացվել և' անհատական, և' կոլեգիալ:

3.4 Ուսանողների դիմումները, բողոքներն ու առաջարկությունները կարող են վերաբերել ուսումնական գործընթացի հետ կապված իրենց սուբյեկտիվ իրավունքների և շահերի պաշտպանությանը, այդ գործընթացի առանձին կողմերի կատարելագործմանը և այն առավել արդյունավետ դարձնելուն:

3.5 Գրավոր դիմումները, բողոքներն ու առաջարկությունները համապատասխան գրանցում ստանալուց հետո հասցեագրվում են պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցներին:

3.6 Դիմումները, բողոքներն ու առաջարկությունները քննարկվում են 3-ից 7 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցը պահանջում է շտապ լուծում:

3.7 Դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկման արդյունքների, դրանց ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների /եթե այդպիսիք եղել են/, ինչպես նաև կայացված որոշումների վերաբերյալ տեղեկությունը տրամադրվում է հասցեատիրոջը գրավոր ձևով՝ ըստ սահմանված ձևաթերթի:

3.8 Կայացված որոշման հետ անհամաձայնության դեպքում, դիմումատուն այն կարող է ներկայացնել վերադաս ստորաբաժանում՝, պահպանելով դիմելու նույն կանոնները:

3.9 Ուսումնական գործընթացի զարգացմանն ու կատարելագործմանը վերաբերող առաջարկությունները կարող են քննարկվել համալսարանի գիտական խորհրդի կամ ամբիոնների նիստերում, որտեղ ընդունված որոշումները կիրացվեն ռեկտորի հրամանով:

3.10 Դասախոսների հետ կապված դիմում-բողոքները կարող են քննարկվել համապատասխան ամբիոնի նիստում՝ դիմողի և դասախոսի մասնակցությամբ /եթե նախապես այլ բան չի որոշվել ամբիոնի վարիչի կողմից/:

3.11 Բուհից ազատվելու կամ մեկ այլ բուհ տեղափոխվելու, տարկետում ձևակերպելու դիմումները պետք է ներկայացվեն մինչև սեպտեմբերի 1-ը կամ ուսումնական տարվա վերջում:

3.12 Ուսանողների դիմումները, բողոքներն ու առաջարկությունները քննարկվում են բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ՝ բացահայտելով խնդրի լուծման համար բոլոր հանգամանքները: Քննարկման արդյունքում համապատասխան ստորաբաժանման ղեկավարն ընդունում է որոշում /հրաման, կարգադրություն/ դիմողի կողմից բարձրացված հարցերը կարգավորելու համար:

3.13 Որոշում ընդունած ստորաբաժանման ղեկավարը հետևում է դրա ժամանակին և պատշաճ իրականացմանը:

3.14 Կայացրած որոշումը պետք է լինի հստակ և հասկանալի:

3.15 ԱԲՀ ռեկտորը վերլուծում, ընդհանրացնում է ստացված դիմումների, բողոքների և առաջարկությունների միջոցով բարձրացված հարցերը, դիտողությունները և միջոցներ ձեռնարկում ուսանողների կարիքների վերհանման, ուսումնական գործընթացների հետ կապված հարցերի, ուսանողների իրավունքների պաշտպանության մեխանիզմներն առավել արդյունավետ դարձնելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ուսանողների դիմումների, բողոքների և
առաջարկությունների ներկայացման ձևաթերթ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

/բաժին, պաշտոն/

/անուն, ազգանուն/

/դիմողի անուն, ազգանուն/

/դիմողի հասցե, հեռախոսահամար/

ԴԻՄՈՒՄ

Հարգելի՝ պրն./տիկին

Դիմող՝ ---------- ----------
/ստորագրություն/ /անուն, ազգանուն/

„--------„ ---------- 20 ----թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ուսանողների դիմումների, բողոքների և
առաջարկությունների պատասխան ձևաթերթ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

/բաժին, պաշտոն/

/անուն, ազգանուն/

/դիմողի անուն, ազգանուն/

ՊԱՏԱՍԽԱՆ

Հարգելի՝ ----------

/անուն, ազգանուն/

/ստորագրություն/

„-------„ ---------- 20 ----թ.